Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Մեծամոր 22 նոյեմբերի 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-172/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար վիդեոէնդոսկոպի ձեռքբերման նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 22-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-172/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ն, որը ներկայացրել է ամենացածր գնային առաջարկը:

Փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել է, որ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, այդ թվում վերը նշված կազմակերպությունը գտնվում է Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը՝ «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ի հայտը գնահատեց հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի հիման վրա հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԱՐԲՆՈՑ» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**